

ԿՐՕՆԻՑ ՆԱԽԱՐԱՐԻՆ ՈՒՂԵՐՁԸ

ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒ ՊԵՏԵՐՈՒՆ, ԱՐՏԱՍԱՆՈՒԱԾ
ՆՈՐ ՏԱՐՈՒԱՆ ԱՌԻԹՈՎ, ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՂԱՏԻՆ ՄԷՁ, 1977 ԴԵԿՏԵՄԲԵՐ 29-ԻՆ

Պարոն Նախագահ,
Զերդ Ամենապատուութիւն Պատրիարք Պենետիքթոս,
Զերդ Ամենապատուութիւն Պատրիարք Տէրտէրեան,
Քրիստոնեայ Համայնքներու պետեր,
Կրօնից Նախարարութեան Ընդհանուր Տնօրէն,
Յարգելի երեսփոխաններ, պետական անձնաւորութիւններ եւ
Սիրելի բարեկամներ:

Ուրախ եմ որ կը հանդիպիմ Իսրայէլի քրիստոնէական Համայնքներու
պետերուն՝ Նախագահական պալատին մէջ, քրիստոնէական Նոր Տարուան ըս-
կիցը, որ թերեւս միեւնոյն ատեն նախօրեակն է նոր դարաշրջանի մը ամբողջ
Միջին Արեւելքի Համար:

Այս առիթով կ'ուզեմ անգամ մը եւս հաստատել Իսրայէլի կառավա-
րութեան յանձնառութիւնը՝ պաշտպանելու բոլոր Համայնքներու կրօնական ա-
զատութիւնը եւ զարգացնելու ներողամտութեան եւ յարգանքի ոգին երկրի
տարբեր Համայնքներուն եւ Հաւատքներուն մէջ: Status Quo-ի (ներկայ դոյա-
միճակի) պահպանումը սրբատեղիներուն մէջ, որ իմ նախարարութեանս պա-
տասխանատուութենէն կախուած է, այս յանձնառութեան ամենէն կարեւոր
արտայայտութիւններէն մէկն է:

Այս տարի եւս կառավարութիւնը պաշտպանեց եւ պահեց Կրօնական
Նախարարութեան միջոցաւ, լաւ յարաբերութիւնները որոնք մեզ կը միացնեն:
Կրնանք յիշել, օրինակի Համար, Եկեղեցիներու ներկայացուցիչներու այցե-
լութիւնը Վերի Սահմանադրութեան՝ Իսրայէլի եւ Լիբանանի միջեւ, ուր ա-
նոնք կրցան անձնապէս տեղեակ ըլլալ մարդկայնական այն դորժուկութեան,
որ տեղի կ'ունենայ այնտեղ: Կամ այն այցելութիւնները որոնց Հրաւիրեցինք
քրիստոնեայ դպրեմանքներու ուսանողները: Նախարարութիւնը կը շարունակէ
նոյնպէս պահել եւ հողալ սրբատեղիները: Յիշենք Վերջին Ընթրիքի վերնա-
տան մէջ եղած նորոգութիւնները, եւ Ս. Յարութեան դանադան մատուուն մէջ
եղած նորոգութիւնները: Այսպիսի յարաբերութիւններ եւ ծրագրեր կրնան
միայն օժանդակել վստահութեան եւ ներդաշնակութեան ընդհանուր մթնո-
լորտի մը:

Ուրախ եմ հաստատելու ձեր համայնքներու բազմաթիւ իրազօրծումները անցնող տարւան ընթացքին՝ կրօնական մարդին մէջ, ինչպէս նաեւ կրթական եւ մշակութային մարզերուն մէջ։ Անոնք կ'արտայայտեն կենսունակութիւնը որ յատուկ է ծաղկող համայնքներուն։ Այսպէս եղաւ նաեւ զնահատումը եկեղեցական պետերու, որոնք Իսրայէլ այցելեցին եւ որոնք հանդիպելու առիթը ունեցանք։ Այն իրողութիւնը որ այս տարի աննախընթաց թիւ մը արձանագրուեցաւ հաւատացեալներու, որոնք ուխտի եկան սրբատեղիներուն, կը վկայէ նոյնպէս կրօնական եւ հոգեւոր կենսունակ եւ յարաճուն կեանքի մը գոյութեան։

Իմ պաշտօնակիցներս եւ ես կը զնահատենք արդարացիօրէն հոգեւոր եւ գործնական ծանր պատասխանատուութիւնները որոնք կը ծանրանան Իսրայէլի քրիստոնէական համայնքներու պետերու ուսերուն։ Կ'ուզենք այստեղ արտայայտել մեր զնահատանքը այն նուիրումին եւ հաւատարմութեան զոր դուք կը դնէք ձեր գործին մէջ, ձեր համայնքներու եւ ամբողջ երկրի բարօրութեան ի նպաստ։

Ոնդրելով որ բարեհաճիք փոխանցել Իսրայէլի ձեր եղբայրներուն եւ ամբողջ աշխարհի ձեր հաւատացեալներուն մեր ամենէն անկեղծ բարեմաղթութիւնները, կը մաղթեմ որ 1978 տարին բերէ պտղաբեր եւ քեմ գործակցութիւն, որպէսզի միասին կարենանք վերբերել կրօնքի դերը մարդոց կեանքին մէջ։

Աղօթեմք որ Նոր Տարին բերէ մեր բոլոր քաղաքացիներուն եւ աշխարհի բոլոր ժողովուրդներուն եղբայրութեան եւ խաղաղութեան զերազոյն օրհնութիւնը։ Այսպէս կ'ըսէ Հրէական աւանդական բարեմաղթութիւնը. «Թող վերջանայ տարին եւ իր չարիքները, եւ բացուի տարի մը օրհնութիւններու»։